ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Վեհափառ Կաթուղիկոսի Դիւանը իւր գրութեամբ 'ի 27 դեկտեմբերի 1896 ամի թ. 1829, ուղարկել էր խմբագրութեանս 2 օրինակ էջմիածնատիպ 1897 թուի օրացոյց «'ի կողմանէ Նորին Ս. Օծութեան՝ 'ի շնորհաւորութիւն Նոր տարւոյ»։

ՎԱՆԻ ԲԵԻԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(*Հանգ. Գ. եպ. Աղուանեանի կազմած*).

---

1. Վարագայ ս. Նշան եկեղեցւոյ սեղանի վէմ քարի սեան վերայ վեց տող բևեռագիր կայ. երկայնութիւն $^3/_4$ կէս կանգնոյ.

2. Նոյն եկեղեցւոյ արևմտեան դրան վերի դրանդիի վերայ 7 տող բևեռագիր, երկայնութիւն $^3/_4$ կէս կանգնոյ.

3. Նոյն վանուց արմտեաց ամբարի դրան վերի դրանդիի վերայ 6 տող բևեռագիր, երկայնութիւն կէս կանգուն, բայց երկայնութեան մէկ մասն եղծուած է. սոյն երեք արձանագրութեանց քարեր միևնոյն տեսակ սև ու պինդ քարեր են.

4. Ի նոյն վանք բոլորշի և մէջ տեղ ծակ քար մի կայ 1 քիլ հաստութեամբ և 3 կանգուն 1 քառորդ շրջապատ մեծութիւն ունի. նոյն քարի բոլորտիք 3 տող բևեռագիր կայ։ Սոյն չորրորդ բևեռագիր քարն Կարմրաւորայ բևեռագրի քարերէն է։

5. Կարմրուորայ վանուց դրսի դրան, որ դէպ յարևմուտ կնայի և Շուշանց գեղի կողմի անկիւնի քովն ընկած է, սոյն դրան ձախակողման դրանդիի (երբ դէպի արևելք նայես) քով պատին մէջ հաստատուած քարի մը վերայ 4 տող բևեռագիր կայ. երկայնութիւն 2 քիլ. [illegible]

6. Նոյն վանուց հարաւակողմի պարսպի մօտ շինուած ջրաղացի ջրտան պատի մէջ հաստատուած քարի մը վրայ 7 տող բևեռագիր կայ 3 քիլ.

7. Սիւգայ գիւղի եկեղեցւոյ արևմտեան դռնէն դուրս աջ կողմի պատուհանին մէջ շարուած խաչքարի մը վրայ բևեռագրեր կայ ինն տողէ բաղկացեալ. տողերու երկայնութիւն 2 քիլ, իսկ ամբողջ տողերու լայնութիւն նոյնպէս 2 քիլ է. սոյն բ եռագիր քարին վրայ ետքէն խաչ քանդակուած լինելուն համար գրերու մեծ մասն եղծուած է քարն՝ Վարագայ ս. Նշան եկեղեցւոյ բևեռագիր վէմ քարի տեսակէն է։

8. Դարձեալ նոյն պատուհանի ներքև եղած գերեզմանի արևմտեան ծայր հաստատուած քարի մի վրայ 8 տող բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն 2 քիլ և լայնութիւն ամբողջ տողերուն 1 թիզ.

9. Նոյն եկեղեցւոյ փողոցի դրան աջ կողմի դրանդիի վարի կտորն բևեռագիր քար է, վրան հինգ տող գիր մնացած. որոց երկայնութիւն 3 քիլ և լայնութիւն ամբողջ տողերուն 1 քիլ։ Սոյն քարի վրայէն քանի մը տող կտրուած հանուած է. յիշեալ դրանդին դրան բացուելուն գոցուելուն յարմարցնելու համար։

10. Դարձեալ նոյն դրան ձախ կողմի դրանդիի վարի կտորն բևեռագիր է աջ կողմի քարի յարևնման և որ վերոյգրեալ վերջի 3 կտոր բևեռագիր քարեր Կարմրուոր վանուց բևեռագիր քարերու տեսակէն են և նոյն տեղէն բերուած։

11. Վանայ այգեստաններց մէջ՝ Ցայնկոյսներ եկեղեցւոյ թաղ բնակող Ատամ աղենց մեծ. մհ. Սահակ աղայի տան տունի մէջ հարաւային սիւնի ներքև եղած բոլորի խարիսխին վրայ երեք տող բևեռագիր կայ, քարին շրջապատն հետևաբար և տողերու երկայնութիւն տաճկական 3 կանգուն և 1 քառորդ։

12. Նոյն տան տունի մէջ հիւսիսային սեան խարիսխ

վերնոյն յարևնման և մեծութեամբ 3 տողով բևեռագիր քար մի է։ Սոյն երկու բևեռագիր քարեր Ցորովանց գիւղի ժամու բերդի փլատակներու տակէն հանուած է։ Սոյն երկու քարեր Վարագայ բոլորշի բևեռագիր քարի տեսակէն է բայց նորա կրկնաչափ հաստութեամբ։ Միայն տարակոյս հոս կմնայ որ սոյն երկու քարերու միջնավայր՝ Վարագայ բոլորշի բևեռագիր քարի պէս ծակ է թէ ոչ. զի վրան սիւն դրուած էր։

13. Վանայ այգեստաններաց հիւսիսակող Ակռփի ըսուած թաղի քառաժայռի վրայ (5 վայրկենի չափ հեռի դէպի արևելք) եօթն կանգուն բարձրութեամբ 3 կանգուն լայնութեամբ և կանգուն կէսոյ չափ խորութեամբ փորուած 3 շրջանակով ձևացեալ ՄՀԷրի անունով դուռ մի կայ, որուն հարթուած երեսի վրայ ինսուն տող բևեռագիր գրուած է. տողերու երկայնութիւն 3 կանգնոյ չափ. բայց ափսոս որ տողերու մեծ մասը եղծուած է. դրան երեսն ի վար ձիներու և անձրևներու թորացուցած ջուրերու սառուցմանէ և արեգական ջերմութենէ ողողելով. գրերու մէկ մասն ալ ջարդուած է բախտախնդիր մարդկանց երկաթիւ և քարամբ բաղխելով. զի թերևս բացուի և երենք ոսկի առնեն ներսէն, ինչպէս որ Սրուանձտեան արժ. Գարեգին վարդապետ յիշեալ դուռի վրայ եղած հինաւանդ վէպն կնկարագրէ իւր ծրագրած Գրոց ու Բրոցի ԽԴ. գլխոյ մէջ։

14. Լէղք գիւղի ս. Աստուածածնայ եկեղեցւոյ սեղանի վէմ քար բոլորշի է 4 կանգնոյ չափ շրջապատ մեծութեամբ, որուն վրայ երկու տող շրջապատ բևեռագիր կայ ուրեք ուրեք կոտրտուելով եղծուած. սոյն քար ևս Վարագայ և Ատոմ աղենց բոլորշի բևեռագիր քարերու տեսակէն է, բայց վրայի գրեր նոցա չափ նուրբ և վայելուչ գծուած չէ։

15. Ս. Գրիգորի վանուց եկեղեցւոյ դարպասի (ժամատան) աջ կողմի մատուռի դրան վերի սեմ քարի վրայ հինգ տող բևեռագիր կայ, երկայնութիւն մի կանգուն։

16. Նոյնպէս և ձախակողման մատուռի վերի սեմ քարի վրայ բևեռագիր կայ տասն տող, երկայնութեամբ մէկ կանգուն և կէս։

17. Նոյն վանուս ս. Սանդխտեան տաճարի վէմ քարի վրայ բևեռագիր կայ 12 տող արևելեան ճակատ, 12 տող

տակի երես, 12 արևմտեան ճակատ, 7 տող աջ հիւսիսա-
յին ճակատ։

18. Ծովստան գիւղի բնակիչ մհ. Միրզայեան մհ. Աւե-
տիս աղայի տան հարաւակողմը նայող փողոցի պատին մէջ
2 հատ բևեռագիր քարերու բեկորներ կայ։

19. Նորա տան կից Վարդանեան Մուրատի տան նոյն-
պէս հարաւակողմը նայող փողոցի պատին վրայ 2 հատ բե-
ւեռագիր քարի բեկորներ կայ. սոյն բեկորներ մի ամբողջ
բևեռագիր տրձանի կտորներ եղած են որ քանի տարի ա-
ռաջ նոյն գիւղացի մհ. Յովհաննէս վառօդով պայթեցուցեր է
շինութեան քարի պէտք ունենալու համար։

20 Սոյն գեղի բնակիչ Ամար օղլու Հիւսէն աղայի այ-
գիին մէջ բոլորշի սանդի քարի շրջապատ երեք տող բևեռա-
գիր կայ. բոլոր շինութեան դրամագիծ 3 կանգուն և կէս է։

21. Նոյն գեղի բնակիչ Հովուենց Յարութիւնեան Նի-
կողայոսի տուն բոլորշի քարի մը վրայ առաջնոյն համանման
3 տող բևեռագիր կայ. սոյն քարը փորած լվացարան ը-
րած են։

22. Նոյն գեղի սուրբ Գէորգ եկեղեցւոյ աջակողման
դասի ետևի սեան պատուանդան բոլորշի քարին վրայ 3 տող
բևեռագիր կայ։

23. Նոյնպէս ձախակողման սեան պատուանդան բոլորշի
քարի վրայ 3 տող բևեռագիր կայ. սոյն չորս քարեր ամենայն
պարագայիւք համանման են. զորս գեղացիք հանած են գեղին
արևելակողմը եղած գերեզմանոցին կից հին բլատակի մը ներ-
քևէն. որուն համար կաւանդեն թէ ի հնումն կռատուն ե-
ղած է. և քարերն նոր սեանց պատուանդաններն են. և այս
քարեր թէ ըստ տեսակին և թէ ըստ ամենայն պարագայից հա-
մանման են Զորոյվանց գեղի բերդի գլուխէն եղած բևեռա-
գիր քարերուն (տես թիւ 12)։

24. Արտամ գեղէն մէկ ժամ հեռու դէպի արևմուտ
կողմը Կատէպանց աւերակ գեղին մօտ Շամիրամայ առուին
վերի եզերքի մօտ ապառաժի մը վրայ 14 տող բևեռագիր
կայ։ Տողերու երկայնութիւն 2 կանգուն է։ Սորա վերի
կողմը (ուղղագիծ) կիյնայ Թահմազի այր։

25. Նոյն առուի ներքև Կատէպանց աւերակէն դէպի
Արտամիտ գիւղ, առուի հաստատութեան համար եղած քա-

բաշարքի մէկ քարին վրայ 9 տող բևեռագիր կայ։ Տողերու երկայնութիւն երկու կանգուն և կէս է։ Սոյն քար՝ տուուի ջրատար խրամատին ձախ կողմը կիյնայ, որուն աջ կողմն է Ղղտահէր ըսուած ագուգած և քարաշար այրն։

26. Սոյն բևեռագրէն մի արտաչափ հեռու (դէպի Արտամիտ) յիշեալ տուուի ներքև եղած շարուածք մի քարի վրայ 3 տող բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն 2 կանգուն։

27. Քաղաքամէջ ս. Սահակ եկեղեցւոյ տաճարի հիմն բևեռագիր քար մի կայ, որ ձախակողման դասին մէջ կիյնայ. դիմաց տախտակամած սեղանով գոցուած է. սոյն արձանագրութիւն 27 տող է, որոց երկայնութիւնն երեք քառորդ կանգնոյ է։

28. Քաղաքամէջ ս. Վարդան եկեղեցւոյ արևմտեան կողմի դրան վարի շէմաքարի վրայ 22 տող բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն 1 քիլ։

29. Ս. Առաքեալ եկեղեցւոյ տաճարի աջակողման մատուռի վերի դրանդի քարի վրայ 2 երեսներու այսինքն արևելեան և արևմտեան ճակատներու վրայ քսանական տող բևեռագիր կայ, կիսով չափ եղծուած։

30. Նոյն տաճարի ձախակողման մատուռի նոյնպէս վերի դրանդի քարի երկու երեսներու արևելեան և արևմտեան ճակատներու վրայ քսանական տող կիսով չափ եղծուած բևեռագիրներ կան։

31. Սոյն եկեղեցւոյն կից ս. Պետրոս եկեղեցւոյ տաճարի արևմտեան ձախակողմի (ներսի կողմէն) պատի 2 հիմնաքարերու վրայ քսանական տող բևեռագրեր կան տեղ տեղ եղծուած և կոտրտուած։

32. Նոյն տաճարի ձախակողմը եղած ձիթատան առաստաղ ծածկող քարին վրայ 10 տող բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն 3 քառորդ կանգնոյ։

33. Վանայ բերդի հարաւակողմը նայող երեսին վրայ բերդի երկայնութեան և բարձրութեան գրեթէ միջավայր տեղը՝ սրբատաշ քառակուսի շրջանակաձևին վրայ երեսուն տողի չափ բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն 3—4 կանգնոյ չափ է. հեռադիտակով նայած եմ։

34. Յիշեալ բերդի հարաւային երեսի արևմտեան

կողմը Խորխոռայ վեր երկու կռածոյ այրերէն վերնոյն դը-
բան՝ արևելեան կողմի վրայ որ արևմուտ կնայէ, 20 տող
բևեռագիր կայ տողերու երկայնութիւն 3 քառորդ կանգնոյ։

35. Նոյն դրան վերի ճակատին վրայ 20 տող բևե-
ռագիր կայ. երկայնութիւն 2 կանգուն։

36. Նոյն դրան արևմտեան կողի վրայ, որ հարաւ
կնայէ 81 տող բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն
1 կանգուն 1 քառորդ։

37. Նորա մօտ և կից անկիւնաձևին միւս երես, որ
արևելք կնայէ 81 տող բևեռագիր կայ. տողերու երկայ-
նութիւն 1 կանգուն ու կէս։

38. Կից սորա՝ որ հարաւ կնայէ 60 տող բևեռագիր
կայ քանի մը էջերու բաժնուած իւրաքանչիւր էջերու տո-
ղեր երարմէ հետզհետէ կարճցած են. ամբողջ էջեր ի միա-
սին առնելով՝ տողերու երկայնութիւն 8 կանգուն է։

39. Թերդ մտնալու վերջի դռնէն (տէմիւր գափու) ներս
կէս արտաչափ հեռու դէպի արևելք ճամբուն վերի պարս-
պին մէկ քարի վրայ 9 տող բևեռագիր կայ. տողերու եր-
կայնութիւն կանգնաչափ, որ դէպի հիւսիս կնայէ։

40. Ցիշեալ բերդի արևելեան ծայր Թէրվիզու դար-
կեահ ըսուած դռնէն դուրս 2 մարտաչափ բարձրութեամբ
երկայն քառակուսի փորուած շրջանակաձևին մէջ 3 կան-
գուն կիսոյ չափ տեղ եղծեալ բևեռագրեր կան. տողերու
երկայնութիւն 2 կանգնոյ չափ։

41. Նոյն բերդի արևելեան ծայրի հիւսիսակողմ 3
կանգուն խորութեամբ և 5 կանգուն բարձրութեամբ և 4
կանգուն լայնութեամբ խորանաձև 2 կամարներէն միոյն՝
այն է արևմտեան կամարի արևելեան պատին վրայ 29 տող
բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն 3 կանգուն։

42. Սոյն կամարներէն մի արտաչափ հեռու դէպի արև-
մուտք 3 պատուհանաձև քառակուսի 2 կանգուն երկայն
և լայն փորուածքներ կան. առաջնոյն մէջ 20 տող բևե-
ռագիր կայ. տողերու երկայնութիւն 2 կանգուն, որ դէպի
հիւսիս կնայէ։

43. Երկրորդին մէջ դարձեալ նոյնչափ տող և երկայն
բևեռագիր կայ.

44. Նոյնչափ և երրորդին մէջ կայ, բայց եղծեալ է։

45. Օրն երեք պատուհանաձև բևեռագրերէն արտաքսափ մը հեռու դէպի արևմուտք բերդի կուրծքին վրայ փորուած այրի դրան (որուն հայեր մժկէ հէր կըսեն) արևմտակողմին վրայ 27 տող բևեռագրեր կայ հողէն դուրս, մի մասն հող ծածկած է։ Տողերու երկայնութիւն 1 կանգուն 3 քառորդ է։

46. Բերդին արևմտեան ծայր դէպի արևմուտք նայող պարսպի մեծամեծ քարերու շարուածքին վրայ (Իսքեալայ կափուսի ըսուած դռնէն դուրս) 3 տեղ բևեռագիր կայ. առաջնոյն վրայ 7 տող բևեռագիր կայ. տողերու երկայնութիւն 1 կանգուն և կէս։

47. Առաջինէն քիչ մը հեռու նոյնչափ երկայնութեամբ 7 տող բևեռագիր.

48. Երրորդն նոյնպէս 7 տող և նոյնչափ երկայն. ասոնցմէ մինն եղծեալ։

49. Քաղաքամէջ Թէրզիպաշեան Ցարութիւն աղայի փողոցի դռնէն դուրս բևեռագրերով քար մի կայ կիսով չափ եղծուած։

50. Նոյն տան դռնէն ներս բակի մէջ ձգուած բևեռագրերով քար մի կայ. առաջնոյն պէս եղծուած. սոյն քարեր հին աճմու խանի աւերակներէն բերուած է որ քաղաքամէջ հին չարշնոցի քովն է։

«ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ»

Հանգուցեալ բաղմահմուտ մագիստրոս Տ. Գաբրիէլ քահանայ Պատկանեանը թողած է մի ձեռագիր ընդարձակ երկասիրութիւն «Հարիւրամեակ Նոր-Նախիջեւան քաղաքի» վերնագրով։

Այդ երկասիրութիւնը պարունակում է իւր մէջ Մնոյ և նորա բնակիչների դաղթականութեան անցքերի համառօտ նկարագիրը, Նոր-Նախիջևանի հիմնարկութեան և նորա հարիւրամեայ լիակատար և բաղմակողմանի պատմութիւնը, խիստ հետաքրքրական և յոյժ կարևոր մանրամասնութիւններով, Նոր-Նախիջևանի այժմեան հայ բը-